

Եր յամեալ յաշխարհին Յունաց, խնդրել զաւրս ի թագաւորէն, ըստ յառաջագոյն գրելոցն ի կարգի: 3 Որք երթեալք յանդիման եղեն թագաւորին Թեոդոսի. որոյ լուեալ¹ զպատճառ նոցա երթիցն՝ սիրով լսեր ի նոցանէ, եւ յանձն առնոյր աւգնել նոցա գնդիւ. եւ մինչդեռ պատրաստէր զիրս խոստմանն՝ հասեալ վախճան սրբոյն՝ վճարեր ի կենցաղոյս: 4 Եւ թագաւորէ փոխանակ նորա Մարկիանոս, որոյ եւ տեղեկացեալ նորա զպէտս խնդրոյն² իրացն Հայոց՝ հարցանէր զաւագս դրանն, թէ ո՞րպիսի թուի ձեզ պատասխանի³ առնել արանցդ եկելոց յաշխարհէն Հայոց առ ձեզ: 5 Պատասխանի տուեալ Անատոլեայ, որ ի ժամուն ասպարապետ Եր Անտիոքայ, եւ Փղորենտի⁴ ուրումն⁵ առն՝ ասորի ազգաւ, որ Եր աւագ դրանն թագաւորին, եւ ասեն. «Մեզ ոչ թուի հաճոյ արհամարիել զուխտ եւ զհաստատութիւն, զոր ի բազում ժամանակաց գրեալ եւ կնքեալ է առաջին թագաւորացն, եւ գրգռել պատերազմաւ իրս մի խաղաղացեալս, եւ ի բաց հանել զաշխարհ մի ի ծառայութենէ թագաւորին իւրեանց: 6 Այլ եւ զելս անյայտ իրացդ պարտ է ածել զմտաւ, զոր ոչ ոք կարէ գիտել, թէ ո՞րպէս, դիւրեա՞ւ եւ կամ սաստիկ պղտորմամբ պատերազմդ եղեալ վճարեսցի»: 7 Եւ զայս այսպէս ասացեալ՝ կասեցուցին զմիտս թագաւորին, եւ վնասեցաւ անկակալութիւն Հայոց, որում ուշ եղեալ մնային, եւ ոչ պատահեցաւ: 8 Եւ մինչդեռ յապաղեալ Եր զրոյց պատասխանոյն այսպէս՝ հասեալ գործ պատերազմին Հայոց եւ Պարսից կատարէր:

9 Եւ տանուտեարքն⁶ Հայոց եւ նախարարք, որք երթեալն էին յաշխարհն Յունաց, իբրեւ տեսին, թէ ոչ ինչ աւգտեցան յաղագս որոյ աշխատն եղեն՝ դարձան եւ փութային գոնեայ ի յուսոյ փրկութենէն չլրիպել, այլ զի արժանի լիցին ընդ ընկերս իւրեանց ըմպել զմարտիրոսութեան բաժակն: 10 Եւ ոչ ժամանեալ ի գործ ժամու պատերազմին՝ առ վայր մի առ լերամբն որ կոչի Պարխար, մերձ առ սահմանակցութիւնն Խաղտեաց, ամրագոյն տեղի մի գտեալ դադարեցին, թէ ո՞րպէս առաջիկայ իրացն մարթասցեն պատրաստել: 11 Յորոց վերայ տեղեակ առաջնորդաւք եկեալ զցայգն⁷, եւ ընդ ծագել առաւաւտուն պատրաստքն զինութ անկանէին ի վերայ այնց նորին ընկերաց Հմայեկայ Մամիկոնէի, ի գիւղն որ անուանի Որջնհաղ, ի գաւառին⁸ Տայոց. քանզի ի ժամուն իջեալ էին ի յամրոցացն լերինն Պարխարայ.

1 Ձ. որոց լուեալ

2 Ձ. խնդրոյն

3 ՏՏ. պատասխան

4 ԲԳտ. փղորենտի. ՁԱտ. փղորենտի

5 Ձ. նախ՝ որումն, յետոյ աւելացրած՝ և

6 Ձ. տանուտեար

7 Ձ. զցայքն

8 Ձ. ի գաւառինն